


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Դանիէլ Եւ
Առիւծին
որջը



Written by: Edward Hughes

Illustrated by: Jonathan Hay

Adapted by: Mary-Anne S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children


www.M1914.org

©2013 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Դարեհն էր նոր թագաւորը Բաբելոնի: Ան խելացի էր: Ան իր թագաւորութեան մէջէն հարիւր քսան հոգի զատեց ամենալաւերը, որպէսզի իրեն օգնեն թագաւորութիւնը կառավարելու համար:




Յետոյ ան երեք հոգի անոնց մէջէն զատել,
որպէսզի անոնց պատասխանատու ըլլան:
Դանիէլ այդ
երեքէն
մէկն էր:



Դարեհ թագաւոր շատ կը յարգէր Դանիէլին, ան մտածեց, որ անոր ընդհանուր կառավարիչ կարգէ ամբողջ թագաւորութեան վրայ:




Մնացեալ կառավարիչները կը նախանձէին անկէ:
Անոնք ծրագրեցին որպէսզի որեւէ սխալ գտնեն
Դանիէլի վրայ, որպէսզի Դանիէլին փորձանքի
մատնեն թագաւորին հետ:




Որքան որ փորձեցին, այդ կառավարիչները չէին կրնար Դանիելի վրայ սխալ մը գտնել: Դանիել անկեղծ էր թագաւորին հանդէպ եւ իր գործերուն ամենալաւագոյնը կ'ըներ:



Նախանձ առաջնորդները գիտեն, որ միակ միջոցը
անոր թակարդի մեջ ձգելն էր: Անոնք գիտեն, թե
բան մը չկայ աշխարհի վրայ, որ անոր ետ
կը դարձներ Իսրայելի
Աստուծուն
պաշտելն:






Դանիելի
թշնամիները
որոշում առին եւ
ծրագիր մը գծեցին:
Անոնք նոր օրէնք մը
պատրաստեցին,
որպէսզի թագաւորը
ստորագրէ: Օրէնքը
կը ստիպէր բոլորը,
որպէսզի միայն
աղօթեն Դարեհ
թագաւորին:




Դարեհ թագաւոր կը ստորագրէ այս օրէնքը:




Նոր օրենքը երբեք
տարբերություն չ'ըրաւ
Դանիելի: Ան նոյն ձեւով
շարունակեց: Ան օրը երեք
անգամ ծունկի եկաւ բաց
պատուհանին առջեւ եւ
աղօթեց երկինքի Աստուծոյն:





Նախանց
առաջնորդները
շտապեցին
թագաւորին քով:
Դարեւ թագաւոր
ճար չունէր, ան
ձերբակալել
տուաւ Դանիէլը:
Օրէնքը պետք էր,
որ յարգուի:






Դանիել պետք
էր, որ մեռնի:
Թագաւորը
շատ փորձեց,
բայց որեւէ
ուրիշ միջոց
չգտաւ օրէնքը
փոխելու:




Դանիել մահապատիժի դատապարտուեցաւ
առիւծներու որջին մէջ նետուելով: Նախքան
Դանիել նետուէր անօթի առիւծներուն որջին մէջ,
Դարեհ թագաւոր անոր ըսաւ. "Քու Աստուածդ,
որուն դուն կը ծառայես տելական,
Ան քեզի պիտի փրկէ":



Թագաւորը այդ գիշեր չքնացաւ: Առաւօտ կանուխ
յաջորդ օրը ան արագ մը վազեց առիւծներուն
որջը:






Դարեհ թագաւոր
պռռաց. "Դանիէլ,
ծառան ապրող
Աստուծոյ, կրցա՞ւ
քու Աստուածդ,
որուն դուն միշտ
կը ծառայես,
ազատել
առիւծներէն":
Թերեւս ան
պատասխան
չէր սպասեր:
Բայց Դանիէլ
պատասխանեց:



Դանիել
կանչեց "Օ՛ր
թագաւոր, իմ
Աստուածս իր
հրեշտակը դրկեց
եւ առիւծներու
բերանները գոցեց,
որպէսզի վնաս
չհասցնեն
ինծի: Նաեւ,
Օ՛ր, թագաւոր,
ես որեւէ սխալ
չգործեցի
քեզի":




Դարեհ թագաւոր շատ ուրախացաւ: Ան հրամայեց,
որ Դանիէլը բարձրացուի, անդունդէն:



Թագաւորը գիտեր, թէ
Աստուած փրկեց Դանիէլը
եւ թէ Դանիէլին թշնամիները
Աստուծոյ թշնամիներն են: Ան
հրամայեց, որ ով որ խաբէց
զինք, որպէսզի
ստորագրէ այդ
գէշ օրէնքը,
առիւծներու
որջին մէջ
նետուին:
Առիւծները
կերան
անոնց:



Դանիել թագաւոր կ'ուզէր, որ աշխարհը ճանչնայ,
թէ երկինքի Աստուածը փրկեց իր հաւատարիմ
ծառան՝ Դանիէլը: Թագաւորը նամակ մը գրեց,
որուն մէջ հրամայեց ամէն անձ, որ ապրող
Աստուծոյ պաշտէ: Եւ թագաւորը Դանիէլի ետ
դարձուց պատիւը
եւ առաջնորդի
դիրքը:



Դանիել եւ Առիւծին որջը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Դանիել 6

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

